ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի

2017թ. ապրիլի 2-ի ընտրությունների դիտորդության

ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ

Սույն զեկույցը պատրաստվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) ՀԿ-ի կողմից «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության (ՔԴՆ) շրջանակներում իրականացրած դիտորդական առաքելության արդյունքում, որում ներգրավել են ԹԻՀԿ-ն, «Իրավունքի Եվրոպա» ՀԿ-ն և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ-ն:

Դիտորդական առաքելությունն իրականացվել է Եվրոպական միության, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Թբիլիսիում Նիդերլանդների թագավորության դեսպանության և Թուֆենկյան հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցում արտահայտված է ԹԻՀԿ-ի կարծիքը, որը կարող է և չհամընկնել ՔԴՆ գործընկեր և ֆինանսավորող կազմակերպությունների տեսակետների հետ:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Երեւան 0002, Մ.Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
Էլ. փոստ՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4

1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 5

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

3. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ 7

3.1 Ընտրական նոր օրենսգրքի ընդունման գործընթացը 7

3.2 ԸՕ բովանդակությունը, նորամուծությունները և խնդիրները 9

4. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ 13

4.1 Դիտորդական առաքելության նպատակները 13

4.2 Դիտորդական առաքելության արդյունքները 15

4.2.1. Քվեարկության նախապատրաստում 15

4.2.2. Քվեարկության ընթացք 16

4.2.3 Արդյունքների ամփոփում 18

4.2.4 Ընդհանուր բնույթի խախտումներ 19

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

6.1 Ընտրական վարչարարության բարելավում 23

6.2 Մրցակցային միջավայրի ապահովում 23

6.3 Ընտրողների ցուցակների ճշգրտում 23

6.4 Դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքների ընդլայնում 24

7. ԱՄՓՈՓՈՒՄ 24

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԺ	Ազգային ժողով
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՁԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸՕ	Ընտրական օրենսգիրք
ԹԻՀԿ	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով
ՔԴՆ	«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության

1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը (ՔԴՆ), որին անդամակցում էր նաև «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն (ԹԻՀԿ) հանդես է եկել մեծամասշտաբ դիտորդական առաքելությամբ՝ իրականացնելով քվեարկության օրվա գործընթացների դիտարկում բոլոր 13 ընտրական տարածքներում (4-ը Երևանում, 9-ը մարզերում), այդ թվում՝ բոլոր 38 տարածքային ընտրական հանձնաժողովներում և թվով 37 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում ընդգրկված 1522 ընտրական տեղամասերում (ընդհանուր տեղամասերի մոտ 76%-ը):

Դիտորդական առաքելության ընթացքում դիտորդների կողմից հաղորդվել է 1618 ահազանգ, որից 216-ը վերաբերել են քվեարկության նախապատրաստական փուլին, 864-ը՝ քվեարկության փուլին, 144-ը՝ արդյունքների ամփոփմանը, իսկ 394-ը եղել են ընդհանուր բնույթի խախտումներ:

Դիտորդների կողմից արձանագրված քվեարկության կարգի խախտումների բնույթը, շղթայական կապն ու տրամաբանությունն փաստում են դրանց համակարգված և համընդհանուր/համատարած բնույթ ունենալու մասին, իսկ դրանց վերաբերյալ իրավասու մարմինների արձագանքը կամ դրանց կապակցությամբ արդյունավետ միջոցների ձեռնարկման բացակայությունը թե՛ ընտրական հանձնաժողովների, թե՛ իրավապահ մարմինների և թե՛ դատական համակարգի կողմից կարող են վկայել նշված պետական ինստիտուտների՝ իրենց օրինական գործառույթներն իրականացնելու անկարողության կամ ցանկության բացակայության մասին:

Դիտորդական առաքելության ընթացքում վեր են հանվել և հիմնավորվել համակարգային բնույթ կրող այլ խնդիրներ ևս, որոնց մի մասը պայմանավորված է առկա իրավակարգավորումների չկիրառմամբ, իսկ զգալի մասը՝ ընտրական օրենսդրության բացերով ու թերություններով: Մասնավորապես, ընտրողների ազատ կամաարտահայտման, վարչական ռեսուրսի օգտագործման, ընտրական վարչարարության, քաղաքացիական վերահսկողության, ընտրական վեճերի ոլորտներում առկա խնդիրները լուրջ խոչընդոտ են արդյունավետ ընտրական համակարգի կայացման ճանապարհին՝ վստահելի ընտությունների ապահովման և այդ գործընթացներում իրավունքների արդյունավետ պաշտպանության համար: Քանի որ այդ խնդիրների ազդեցությունն առանցքային դեր ունի ընտրական իրավունքի երաշխավորման տեսանկյունից, անհրաժեշտ է, որ դրանք հաշվի առնվեն ընտրական օրենսդրության վերանայման շրջանակներում և հետագայում կազմակերպվելիք ընտրական գործընթացներում:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2017թ. ապրիլի 2-ին տեղի ունեցած ԱԺ ընտրությունները պետության համար առանցքային նշանակություն ունեցող միջոցառում էին, քանի որ առաջին համապետական ընտրություններն էին 2015թ. սահմանադրական փոփոխություններից հետո, որի արդյունքում կառավարման համակարգը փոխվեց խորհրդարանականի՝ նշանակալիորեն ամրապնդելով ՀՀ Ազգային ժողովի դերը: Բացի այդ, ընտրությունները անց էին կացվում նոր Ընտրական օրենսգրքով (ԸՕ)[1] սահմանված ընթացակարգերով՝ ընտրողների գրանցման և քվեարկության գործընթացի հրապարակայնացման տեխնիկական նորամուծությունների կիրառմամբ, ինչպես նաև օրենսդրական պահանջի համաձայն՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակմամբ:

Սույն զեկույցը տրամադրում է փաստական, անկողմնակալ և անկախ դիտանկյուն ԱԺ ընտրությունների գործընթացների մասին՝ արտացոլելով ՔԴՆ դիտորդական առաքելության արձանագրած հիմնական արդյունքները, քվեարկության ընթացքում նկատված խախտումներն ու կեղծիքները: Այս ամենի հիման վրա զեկույցում ներկայացվում է ԱԺ ընտրությունների վերաբերյալ ԹԻՀԿ եզրակացությունը, ինչպես նաև առաջարկություններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ գոյություն ունեցող ընտրական իրավակարգավորումների թերությունները շտկելու և վեր հանված խնդիրները հաղթահարելու առումով:

Զեկույցի հիմնական թիրախ լսարանն են՝

- **հանրությունը**՝ ընդհանուր առմամբ, որն, ըստ էության, հանդիսանում է ցանկացած ընտրությունների դիտորդական առաքելության հիմնական «պատվիրատուն» և դրա արդյունքների հիմնական շահառուն.
- **հասարակական և քաղաքական միավորները,** որոնք շահագրգռված են Հայաստանի ընտրական համակարգի բարելավմամբ և նպատակ ունեն գործուն մասնակցություն ունենալ թե՛ իրավական կարգավորումների մշակման և թե՛ դրանց կիրառման փուլերում.
- **քաղաքական որոշումներ ընդունող և դրանք կյանքի կոչող պետական մարմինները՝** ի դեմս ԱԺ և գործադիր իշխանության համապատասխան մարմինների, ինչպես նաև ընտրական վարչարարությամբ զբաղվող ինստիտուտների՝ ընտրական հանձնաժողովների՝ ԿԸՀ գլխավորությամբ, որոնք պատասխանատու դեր ունեն նոր ընտրական իրավակարգավորումների պատշաճ իրականացման և ընտրական համակարգի նկատմամբ հանրային ցածր վստահության հաղթահարման համար.
- **իրավապահ համակարգը,** որը ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում պատասխանատու է հնարավոր իրավախախտումների կանխման, հայտնաբերման և բացահայտման համար.
- **միջազգային կազմակերպությունները,** որոնք աջակցում են ժողովրդավարական գործընթացների զարգացմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը և կարիք ունեն

[1] 2016թ. մայիսի 25-ին ընդունված նոր ընտրական օրենսգիրք, 30.06.2016թ. և 20.10.2016թ. ընտրական օրենսգրքի փոփոխություններ, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109081:

պատկերացում կազմելու հայաստանյան ընտրական համակարգում տիրող իրավիճակի, ինչպես նաև դրա բարելավման հնարավոր ուղղությունների վերաբերյալ:

Զեկույցը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- *Ընտրական օրենսդրությունը* բաժինը համառոտ նկարագրում է ԱԺ ընտրություններ անցկացման օրենսդրական ենթատեքստը՝ հիմնական երկու բաժիններով. ընտրությունները կարգավորող հիմնական փաստաթղթի՝ ԸՕ ընդունման և հարակից օրենսդրական փոփոխությունների գործընթացը և ընթացիկ իրավակարգավորումների համառոտ նկարագրությունը.
- *Դիտորդական առաքելությունը* բաժինը ներկայացնում է առաքելության նպատակները, կազմը, մեթոդաբանությունը, ինչպես նաև դրա արդյունքները, որտեղ ըստ տեսակների և ենթատեսակների խմբավորված ներկայացվում են դիտորդների կողմից վեր հանված խախտումները և ընտրակեղծիքները.
- *Եզրակացություն* բաժինն ամփոփում է դիտորդական առաքելության արդյունքում ձևավորված՝ քվեարկության գործընթացի ընդհանուր պատկերը և տալիս դրա գնահատականը.
- *Առաջարկություններ* բաժնում ուրվագծված են Հայաստանում քաղաքացիների ընտրական իրավունքի պատշաճ իրականացման համար առաջնահերթ և արմատական լուծում պահանջող հիմնախնդիրները և դրանց լուծման հետ կապված հնարավոր քայլերը:

3. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ընտրական նոր օրենսգրքի ընդունման գործընթացը

2015թ. դեկտեմբերի 6-ին կատարված սահմանադրական փոփոխություններով նախատեսված էր մինչև 2016թ. հունիսի 1-ն ընդունել նոր ընտրական օրենսգիրքը, որով կկարգավորվեին նոր ընտրական համակարգի մանրամասները և դրան համապատասխան 2017թ. գարնանը կանցկացվեին ԱԺ ընտրություններ:

ՀՀ նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրով[2] հաստատվել է սահմանադրության փոփոխություններով անվանականորեն սահմանված և ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկը՝ նախագծի մշակման և ներկայացման համար պատասխանատու մարմինների և ժամկետների սահմանմամբ:

Հիշյալ հրամանագրի համաձայն՝ Ընտրական օրենսգրքի մշակման և ներկայացման համար պատասխանատու մարմիններ են սահմանվել ՀՀ արդարադատության նախարարությունը և Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իսկ նախագիծը ԱԺ ներկայացնելու

[2] ՀՀ նախագահի 2016թ. փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագիր, http://www.president.am/hy/decrees/item/2566:

վերջնաժամկետ է սահմանվել 2016թ. մարտի 1-ը, այսինքն՝ ՀՀ նախագահին առընթեր մասնագիտական խորհրդի ստեղծումից 18 օր անց: Նախագիծը մշակվել է ոչ մասնակցային եղանակով, անտեսելով ԵԱՀԿ ԺՄԻՀԳ-ի առաջարկները[3]՝ աշխատանքային խմբի նեղ շրջանակում՝ առանց լայն իրազեկման և քննարկման: Հանրության այն հասանելի է դարձել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի խախտումով[4], ՀՀ կառավարության 2016թ. մարտի 3-ի նիստի օրակարգի շրջանակում[5], Վենետիկի հանձնաժողովի ինտերնետային կայքում դրա անգլերեն տարբերակը տեղադրվելուց երկու շաբաթ անց: Հրապարակման պահից մինչև նախագիծն ԱԺ-ի կողմից ընդունելու ժամանակահատվածը եղել է խիստ սեղմ, իսկ նախագծի վերաբերյալ քաղաքացիական հասարակության կառույցների մտահոգությունները և առաջարկությունները ներկայացնելու և դրանք քննարկելու հնարավորությունները՝ սահմանափակ: Դրանք հիմնականում եղել են հանրային լսումները ԱԺ-ում և, այսպես կոչված, «4+4+4» ձևաչափով կոնկրետ մի քանի հարցերի շրջանակ ներառող քննարկումները իշխանության, ոչ իշխանական խորհրդարանական ուժերի և որոշ հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Նախագծի հեղինակները հաճախ խուսափել են քաղաքացիական հասարակության կողմից կազմակերպվող այլ քննարկումներին մասնակցելուց: Արդյունքում, չնայած նախագծի բազմաթիվ դրույթների վերաբերյալ հասարակական կազմակերպությունների և փորձագետների քննադատությանը[6] փաստաթղթի բարելավման ուղղությամբ ներկայացված կոնկրետ առաջարկներին, 2016թ. մայիս 25-ին ընդունված ԸՕ-ը հաշվի չի առել դրանք: Այս առնչությամբ ՔԴՆ անդամ հասարակական կազմակերպությունները մի քանի անգամ հանդես են եկել համապատասխան հայտարարություններով[7]: Ընդունված ԸՕ-ով նախատեսված հիմնական առաջարկներից մեկը՝ կապված մատնահետքերի համադրման հնարավորությամբ ընտրողների նախագրանցման համակարգի ներդրման միջոցով ընտրողների ուռճացված ցուցակների խնդրի լուծման և ՀՀ-ում բնակվող ընտրողների ցուցակների ճշգրտման հետ, ի վերջո, տարբեր տեխնիկական պատճառաբանություններով ձախողվել է[8]:

ԸՕ ընդունումից հետո, դրա բովանդակության առանձին դրույթների շուրջ քննարկումները շարունակվեցին քաղաքական ուժերի, ինչպես նաև միջազգային կառույցների և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների միջև՝ մասնավորապես, կենտրոնանալով քվեարկության գործընթացի օրինականության վերահսկման կազմակերպական-տեխնիկական մեխանիզմների վրա՝ ակնկալելով արտասահմանյան և միջազգային աջակցություն: 2016թ. հունիսին ԸՕ-ում կատարվեցին փոփոխություններ, որով հանվեցին դիտորդական առաքելություններին հավատարմագրման համար ներկայացվող ստուգարքի պահանջը և սահմանվեց դիտորդների վարքագծի կանոններ ընդունելու և դրանց ու ԸՕ վերաբերյալ

[3] ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ հանրաքվեի փորձագիտական խմբի վերջնական զեկույց: ՀՀ սահմանադրական հանրաքվե, 6 դեկտեմբերի 2015թ., http://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true:

[4] ԹԻՀԿ հայտարարությունը ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի մշակման գործընթացի անօրինականության վերաբերյալ, https://transparency.am/hy/news/view/1318:

[5] ՀՀ կառավարության նիստի 2016թ. մարտի 3-ի օրակարգ, https://www.e-gov.am/sessions/archive/2016/03/03:

[6] Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նախագծի դրույթների՝ միջազգային ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ կարծիք, https://transparency.am/hy/news/view/1439:

[7] «Հայտարարություն նոր ընտրական օրենսգրքում ընտրական գործընթացի օրինականության վերահսկման կազմակերպական-տեխնիկական մեխանիզմների վերաբերյալ», 16-ը հունիս, 2016թ., https://transparency.am/hy/news/view/1509 և «Հայտարարություն ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծում տեղական դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների գործունեության սահմանափակումների վերաբերյալ», 31 մայիս, 2016թ. https://transparency.am/hy/news/view/1479:

[8] 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների ընտրական թվերի էլեկտրոնային մոնիտորինգի ԹԻՀԿ զեկույց, https://transparency.am/files/publications/1499414816-0-710604.pdf:

դասընթացներ կազմակերպելու պահանջը, ինչպես նաև 2,5 ժամով երկարաձգվեցին վերահաշվարկի և բողոքարկման ժամկետները:

2016թ. հոկտեմբերին ԸՕ-ը կրկին փոփոխվեց: Քաղաքական ուժերը համաձայնություն ձեռք բերեցին քվեարկության օրը ընտրական տեղամասերի տեսաձայնագրման և առցանց հասանելիության, ինչպես նաև քվեարկությունից հետո ստորագրված ընտրական ցուցակների հրապարակման վերաբերյալ, ինչն ամրագրվեց 2016թ. հոկտեմբերի 20-ին «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով[9]: Հետագայում նշված դրույթների կյանքի կոչումը իրականացվեց որոշակի թերություններով[10]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ քաղաքական ուժերի միջև փոխհամաձայնությունը ձեռք էր բերվել խնդիրների բավականին նեղ շրջանակի վերաբերյալ: Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպությունների կողմից մշտապես ընդգծվել է, որ օրենսդրական այդ փոփոխություններն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են ազատ և արդար ընտրություններ կազմակերպելու համար, ինչպես նաև չեն կարող չեզոքացնել ԸՕ առկա էական թերություններն ու բացերը, այդ թվում՝ քարոզարշավի ֆինանսավորման, բողոքարկման գործընթացի, դիտորդական առաքելությունների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների սահմանափակումների հետ կապված[11]:

3.2 ԸՕ բովանդակությունը, նորամուծությունները և խնդիրները

2016թ.-ի ԸՕ-ը նախատեսել է մի շարք նորամուծություններ, որոնք միտված են նվազեցնելու ընտրախախտումները և բարձրացնելու հանրային վստահությունը ընտրական գործընթացների նկատմամբ: Այդպիսի գործիքներ են՝

- ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակումը՝ երկրից բացակա և ընտրություններին չմասնակցող ընտրողների փոխարեն քվեարկությունը բացառելու նպատակով.
- տեղամասերի առցանց տեսանկարահանումը և հեռարձակումը՝ քվեարկության գործընթացի վերահսկողությունն ապահովելու նպատակով.
- ընտրողների էլեկտրոնային գրանցումը՝ կրկնաքվեարկությունները կանխարգելելու նպատակով.
- դիտորդական կազմակերպությունների կողմից ստուգարքների վերացումը՝ մասամբ ընդլայնելով դիտորդների ներգրավման հնարավորությունները.
- բողոքարկման ժամկետի երկարաձգումը՝ մասամբ ընդլայնելով բողոքարկման հնարավորությունը:

---

[9] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109028:

[10] ՔԴՆ անդամ կազմակերպությունների հայտարարությունը ընտրողների ցուցակների հրապարակման մասին, 4 ապրիլ, 2017թ., https://transparency.am/hy/statements/view/253:

[11] ՀԿ-ների հայտարարությունը ընտրական օրենսգրքի և դրա շուրջ վերջին զարգացումների վերաբերյալ, 9 սեպտեմբեր, 2016թ., https://transparency.am/hy/news/view/1600 և Հասարակական կազմակերպությունների համատեղ հայտարարությունը, 12 սեպտեմբեր, 2016թ., https://transparency.am/hy/news/view/1602:

Ի լրումն ԸՕ-ի՝ ՀՀ քրեական օրենսգրքով խստացվել է ընտրախախտումների համար պատասխանատվությունը, ինչպես նաև սահմանվել է խրախուսական նորմ, որի համաձայն ընտրակաշառք ստացող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե վերջինս, մինչև իրավապահ մարմիններին կատարված հանցանքի մասին հայտնի դառնալը, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում կաշառք ստանալու մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Այդուհանդերձ, նոր ԸՕ-ում առկա մնացին լրջագույն խնդիրներ, և չնայած դրանց մասին հասարակական և ընդդիմադիր քաղաքական կառույցների կողմից հնչեցված քննադատությանը, դրանք անտեսվեցին օրինագծի հեղինակների կողմից:

Ընտրությունների վրա ուղղակի կամ անուղղակի կերպով ազդող կարևորագույն հիմնախնդիրներից են.

- **«Կայուն մեծամասնության» համակարգի ներդնում.** ԸՕ-ի իրավակարգավորումների համաձայն մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը ստացած կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին տրվում է խորհրդարանական տեղերի 54 տոկոսը՝ անհրաժեշտության դեպքում նաև բոնուսային լրացուցիչ տեղեր, ինչն աղավաղում է քաղաքական մրցակցությունը և խորհրդարանի ներկայացուցչականության համամասնությունը:
- **Կոալիցիա կազմելու հնարավորության սահմանափակում.** քաղաքական կոալիցիա կարող են կազմել ընտրական արգելապատնեշները հաղթահարած առավելագույնը երեք կուսակցություն (կուսակցությունների դաշինքներ), ինչը նշանակում է, որ ընտրապայքարի արդյունքում շեմը հաղթահարած և խորհրդարան մտած ոչ բոլոր քաղաքական ուժերին է տրվում կոալիցիա ձևավորելու կամ դրա ձևավորմանը մասնակցելու իրավունք:
- **Քվեարկության երկրորդ փուլի նախատեսում.** խորհրդարանում մեծամասնություն ձևավորելու անհնարինության դեպքում նոր ընտրություններ անցկացնելու համընդհանուր տարածում ստացած պրակտիկայի փոխարեն նախատեսված է առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների մասնակցությամբ քվեարկության երկրորդ փուլի անցկացում, ինչն էապես նվազեցնում է համագործակցելու, կոնսենսուսային կառավարման շարժառիթները և հակադրվում համամասնական ընտրակարգի տրամաբանությանը:
- **Տարածքային ընտրական ցուցակների ներմուծում.** վերջինս, ըստ էության, նախկին մեծամասնական համակարգն է՝ լրացված վարկանիշային բաղադրիչով, ինչի շնորհիվ մեծահարուստ գործարարների համար ձևավորվում է անձնական մոտիվացիա՝ մուտք գործելու խորհրդարան և ձեռք բերելու պատգամավորի համար սահմանված օրենսդրական երաշխիքներն ու արտոնությունները: Այս համակարգի միջոցով ինտենսիվ կերպով խթանվում են ընտրակաշառքի բաժանումը, աշխատանքային, ծառայողական կամ այլ կախվածության մեջ գտնվողների նկատմամբ ճնշումների գործադրումը և ընտրական գործընթացների վրա այլ եղանակով ներգործությունը:

- **Վարչական ռեսուրսի օգտագործումը սահմանափակող թերի կարգավորումներ.** նախընտրական քարոզչության ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործման հետ կապված ԸՕ-ի իրավակարգավորումները բավարար և արդյունավետ միջոց չեն այդ երևույթը կանխարգելելու համար: Բացի այդ, բավականաչափ կտրուկ և խիստ չեն դրա համար նախատեսված իրավական հետևանքները, ինչի արդյունքում հանրային ծառայող հանդիսացող թեկնածուները կամ նրանց սատարող քաղաքական ուժի ներկայացուցիչներն անարգել օգտագործում են ծառայողական նպատակներով իրենց տիրապետության տակ գտնվող գույքը, այդ թվում՝ տարածքները, կապի միջոցները, տրանսպորտը և նյութական ու մարդկային ռեսուրսները[12]:
- **Ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի սահմանափակում.** թեև ԸՕ-ն ամրագրում է յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքը, սակայն բացառում է ՀՀ-ից դուրս բնակվող ընտրողների համար քվեարկությանը մասնակցելու հնարավորությունը, եթե վերջիններս չեն համարվում ԸՕ-ով սահմանված կոնկրետ կատեգորիայի անձինք, որը ներառում է արտերկրում դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն իրականացնող ՀՀ քաղաքացիներին և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամներին, արտերկրում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողներին, ինչպես նաև ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների աշխատակիցներին ու նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամներին, որոնց թույլատրվում է մասնակցել քվեարկությանը և քվեարկել էլեկտրոնային եղանակով:
- **Ընտրական տեղամասերի գաղտնագրում.** ԸՕ համաձայն գաղտնի են ոչ միայն զորամասերում հաշվառված ընտրողների թիվը, այլև այն ընտրական տեղամասերի համարները և գտնվելու վայրերը, որտեղ քվեարկում են զորամասերում կազմվող ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողները: Սրանով էապես սահմանափակվել է զինծառայողների քվեարկության կարգի նկատմամբ հանրային վերահսկողությունը և մեծացել են վարչական ռեսուրսի չարաշահման ռիսկերը: Կանոնակարգված չէ զինծառայողների շրջանում նախընտրական քարոզչության կազմակերպման հարցը՝ ստեղծելով անհավասար հնարավորություններ մրցակից կուսակցությունների համար՝ ավելացնելով իշխող կուսակցությունների հնարավորությունը:
- **ՁԼՄ-ների իրավունքների սահմանափակումներ.** ընտրական օրենսդրության մեջ առաջին անգամ նոր ԸՕ-ով նախատեսվել է ՁԼՄ-ների հավատարմագրում՝ ընտրությունները լուսաբանելու համար: Ընդ որում՝ հավատարմագրման համար ՁԼՄ պետք է բավարարի առնվազն մեկ տարվա գործունեության պահանջը և չհավատարմագրի ավելի քան 50 ներկայացուցիչ, այն դեպքում, երբ երկրում կազմավորվող տեղամասերի թիվը 1997 է: Հարկ է նկատել, որ այս պահանջները չեն վերաբերում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող լրատվամիջոցներին, ինը նշանակում է վերջիններիս համար ստեղծվել են անհիմն արտոնյալ պայմաններ:
- **Դիտորդների իրավունքների սահմանափակում.** նախորդ ընտրական օրենսգիրքն իրավունք էր տալիս դիտորդներին հետևել ընտրական հանձնաժողովի

[12] Հայաստանի 2017 թ. ապրիլի խորհրդարանական ընտրությունների ժամանակ վարչական ռեսուրսի չարաշահման և այլ ընտրական խախտումների մոնիտորինգի ԹԻՀԿ զեկույց, https://transparency.am/files/publications/1499157888-0-126034.pdf:

աշխատանքներին և հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները: Նոր ԸՕ-ով վերացվել է դիտարկումներ ու առաջարկություններ ներկայացնելու դիտորդի իրավունքը ոչ միայն հանձնաժողովի աշխատանքների, այլև քվեարկության կարգի վերաբերյալ ընդհանրապես: Միայն սահմանված է դիտորդի՝ քվեարկության կարգի խախտման վերաբերյալ իր գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջի իրավունքը: Այսինքն, անգամ տեղի ունեցող ընտրախախտման դեպքում դիտորդն իրավունք չունի հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել տեղի ունեցող խախտման վրա կամ առաջարկել այն վերացնել, այլ կատարված փաստից հետո միայն կարող է այն գրանցելու պահանջ ներկայացնել: Ավելին՝ հանձնաժողովին ուղղված դիտարկումը կամ առաջարկությունը հանձնաժողովի կողմից կարող է որակվել որպես միջամտություն իր աշխատանքներին՝ դրանից բխող բացասական հետևանքներով:

- **Դիտորդին, ՁԼՄ ներկայացուցչին և վստահված անձին մեկուսացնելու հնարավորություն.** ընտրական հանձնաժողովներին իրավունք է վերապահվել ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ դիտորդին, ՁԼՄ ներկայացուցչին և վստահված անձին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ԸՕ պահանջներն այնպիսի եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը: Դիտորդի պարագայում հեռացման հիմք է նաև դիտորդի անկողմնակալության սկզբունքը խախտելը, սակայն ինչպես այս, այնպես էլ մի շարք այլ գնահատողական հասկացություններ (օրինակ՝ «հանձնաժողովի բնականոն աշխատանքի էապես խաթարումը») կարող են հայեցողական մեկնաբանությունների և հանձնաժողովների կողմից այս իրավունքի չարաշահման հիմք հանդիսանալ:
- **Դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների թվի սահմանափակում տեղամասում.** տեղամասային հանձնաժողովներին իրավունք է տրվել 2/3-ի քվեարկությամբ սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ ներկա գտնվող դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների թիվը, բայց ոչ պակաս 15-ից, եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը: Սակայն այս դրույթը չի տարածվում այցելուների, միջազգային դիտորդների և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա, ինչը խտրական կարգավորում է:
- **Բողոքարկման ոչ ողջամիտ ժամկետներ.** ԸՕ-ով սահմանված բողոքարկման վերջնաժամկետի՝ մինչև քվեարկությունից հետո երկրորդ օրվա ժամը 11:00-ը, երկարաձգմանը զուգահեռ ներմուծվել են բողոքներն ընդունելու ժամային սահմանափակումներ՝ քվեարկության օրը՝ մինչև 22:00, հաջորդ օրը 12:00-18:00 և երկրորդ օրը՝ 09:00-11:00: Բացի այդ, դիմում-բողոքին ներկայացվող ձևական պահանջներով արհեստականորեն ստեղծվել են տեխնիկական խոչընդոտներ, ինչպես օրինակ՝ մինչև վերջնաժամկետը համապատասխան ընտրական հանձնաժողով մուտքագրելու և լիազորագրերի բնօրինակներն ու դիտորդի վկայականի պատճենը դիմումին կցելու պահանջները: Չնայած ԵԱՀԿ ԺՀՄԻԳ առաջարկներին՝ դիտորդական

կազմակերպությունների չի տրվել քվեարկության կամ ընտրությունների արդյունքները վիճարկելու իրավունք:

ԸՕ-ի վերոնշյալ խնդիրներից բացի, ՀՀ Քրեական օրենսգրքում նախատեսվել է պատասխանատվություն այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելու համար, ընդ որում՝ ինչպես դիտավորյալ, այնպես էլ անփութությամբ գործելիս: Վերջին դեպքում սահմանվել է տուգանք 200,000-800,000 ՀՀ դրամ կամ ազատազրկում՝ մինչև երկու տարի ժամկետով (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 154.[8]): Այս պատժամիջոցն ակնհայտորեն սահմանափակում է ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակման արդյունքում բացահայտված տվյալ տեսակի ընտրակեղծիքի վերաբերյալ հաղորդումների ներկայացման հնարավորությունը՝ ըստ էության չեզոքացնելով ցուցակների հրապարակման դրական ազդեցությունը հանրային վերահսկողության տեսանկյունից[13]:

4. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Դիտորդական առաքելության նպատակները

2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին ՔԴՆ կողմից իրականացված դիտորդական առաքելության նպատակն էր վերահսկել Ազգային ժողովի ընտրությունները՝

- կանխարգելելու և/կամ արձանագրելու քվեարկության օրվա ընտրախախտումները դիտարկվող տեղամասերում.
- ընտրական գործընթացի և ընտրական իրավունքի իրացման վերաբերյալ ձևավորելու տեղեկացված, անկախ և անկողմնակալ տեսակետ.
- վերլուծելու ընտրական գործընթացի թերություններն ու ներկայացնելու առաջարկություններ օրենսդրության բարեփոխման համար.
- գնահատելու ներպետական օրենսդրությանն ու միջազգային չափանիշներին ընտրությունների համապատասխանությունը.
- բողոքարկելու ընտրախախտումները վարչական և դատական մարմիններում և ըստ անհրաժեշտության ներկայացնելու հաղորդումներ իրավապահ մարմիններին:

ՔԴՆ-ն ներգրավել է 4437 դիտորդ, որից Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 2127-ը հավատարմագրվել են ԹԻՀԿ-ի կողմից, 1967-ը՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ կողմից, և 343-ը՝ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ կողմից[14]: Խորհրդարանական ընտրություններին ՔԴՆ դիտորդական առաքելությանը մասնակցել են նաև հետևյալ հասարակական կազմակերպությունները՝

[13]ՀԿ-ների հայտարարությունը ՀՀ կառավարության ներկայացրած «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրինագծի մասին, 22 հոկտեմբեր, 2016թ. https://transparency.am/hy/anews/view/1690:
[14] Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայք, Խորհրդարանական ընտրություններ, http://www.elections.am/parliamentary:

1. «Խորան Արդ» ՀԿ, Գյումրի
2. Սախարովի կենտրոնի Շիրակի մասնաճյուղ, Գյումրի
3. Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն, Ալավերդի
4. «Սոսե կանանց հիմնահարցեր» ՀԿ, Գորիս
5. Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ, Արմավիր
6. Վարդենիկի «Համայնքի զարկերակ» ԵՀԿ, Վարդենիկ
7. Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների շահերի պաշտպանության և ներառման «Աստղացոլք» ՀԿ, Ճամբարակ

ՔԴՆ-ում ներգրավել են ինչպես ՀՀ քաղաքացիներ, այնպես էլ՝ 22 երկրում բնակվող 147 սփյուռքահայ և Հայաստանում ժողովրդավարության հաստատմամբ շահագրգիռ մոտ 100 այլազգի քաղաքացի: Վրաստանի դիտորդները ներգրավվել են առաքելության մեջ «Բազմազգ Վրաստան» հասարակական կազմակերպության հետ համագործակցության շնորհիվ:

Դիտորդների համար անցկացվել է ընտրական օրենսդրության ու դիտորդների վարքագծի կանոնների ուսուցում: Դասընթացների շրջանակը ներառել է ընտրական օրենսդրությունը, ընտրական գործընթացները, քվեարկության կարգը, դիտորդների և քվեարկության մյուս մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները և այլ հարցեր:

Դիտորդական առաքելություն իրականացվել է 3010 դիտորդի կողմից 1522 տեղամասում: Ստորև ներկայացված է ըստ մարզերի և ընտրատարածքների դիտարկված տեղամասերի քանակը.

Վարչական շրջան	**Ընտրատարածք**	**Ընտրատարածքային հանձնաժողով**	**Դիտարկված տեղամասերի քանակ**
Երևան	1-4	1-5, 7-10	342
Արագածոտն	7	17-18	100
Արարատ	5	11-13	118
Արմավիր	6	14-16	118
Գեղարքունիք	8	19-21	136
Լոռի	9	22-25	190
Կոտայք	10	26-29	116
Շիրակ	11	30-33	145
Սյունիք	12	34-35	129
Վայոց Ձոր	12	36	46
Տավուշ	13	37-38	82
Ընդամենը			**1522**

Դիտորդներն ընտրատեղամասերում աշխատել են զույգերով: Ընտրախախտումների ռիսկեր բացահայտելիս դիտորդները փորձել են կանխարգելել խախտումները, իսկ խախտումները փաստացի տեղ գտնելու դեպքում պահանջել են, որպեսզի տեղամասային հանձնաժողովները

գրանցեն դրանք ընտրական տեղամասի գրանցամատյանում: Դիտորդները ընտրախախտման և դրան տրված արձագանքի վերաբերյալ կարճ հաղորդագրություններով ահազանգ են ուղարկել համակարգող կենտրոն: Դիտորդների կողմից ստացված ահազանգերը տվյալ օրվա դրությամբ՝ պատկերվել են ահազանգերի առցանց քարտեզում: Այնուհետև համակարգող կենտրոնի աշխատակիցները հեռախոսային կապի միջոցով ստուգել են ահազանգերի ճշգրտությունը և անհրաժեշտության դեպքում մանրամասնել ընտրախախտումների նկարագրությունը: Արդյունքում ճշգրտվել է 1618 խախտում 624 տեղամասերից:

4.2 Դիտորդական առաքելության արդյունքները

Դիտորդական առաքելության արդյունքում վեր հանված ընտրախախտումները և քվեարկությանն կարգի բացթողումները ներկայացված են՝ խմբավորված ըստ խախտումների տեսակների: Խախտումների խմբերը ներկայացված են ըստ ժամանակային փուլերի՝ քվեարկության նախապատրաստումից մինչև բողոքարկում: Խախտումների դեպքերի առավել մանրամասն նկարագրությունը հասանելի է ահազանգերի քարտեզում՝ հետևյալ հղումով՝ https://transparency.am/elections/2017-04-02/map[15]:

4.2.1. Քվեարկության նախապատրաստում

Քվեարկության նախապատրաստման փուլի գործընթացների առնչությամբ արձանագրվել է ընդհանուր առմամբ 216 խախտում (դիտարկված բոլոր խախտումների 13.4%-ը)՝ 179 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի 11.8%-ը):

Քվեարկության սենյակի կահավորում

Քվեարկության նախապատրաստման փուլում ամենից հաճախ հանդիպող խախտումները կապված են եղել քվեարկության սենյակի սխալ կահավորման հետ: Ընդհանուր առմամբ, գրանցվել է 137 նման խախտում՝ 121 տեղամասում, որոնցից 87-ը վերաբերել է քվեարկության սենյակի հասանելիությանը, մասնավորապես, թեքահարթակի բացակայությանը, ինչը կարող էր դժվարամատչելի դարձնել սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների մուտքը քվեարկության սենյակ: 31 դեպք է գրանցվել՝ կապված քվեարկության սենյակի ոչ պատշաճ կահավորման հետ, ինչը հնարավորություն չի տվել կամ դժվարացրել է դիտորդների կողմից քվեարկության գործընթացին և հանձնաժողովի աշխատանքներին հետևելը: Երրորդ ենթախմբի՝ քվեախցիկների քանակի և դասավորության հետ կապված խնդիրներ արձանագրվել են 19 տեղամասերում: Դրանց ճնշող մեծամասնության պարագայում քվեախցիկներից առնվազն մեկը տեղադրված է եղել այնպես, որ հնարավոր է եղել վերահսկել/դիտարկել քվեախցիկի ետևում գտնվող մարդուն: Դրանցից 9-ի դեպքում դիտորդի կողմից հանձնաժողովին տեղեկացնելուց հետո, խախտումը վերացվել է: Ընդհանուր առմամբ գրանցված 137 խախտումներից միայն 24-ն է վերացվել, և 58-ը գրանցվել տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:

[15] Հարկ է նշել, որ քարտեզում արտացոլված են նաև ՔԴՆ, այնպես էլ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի դիտորդների թիվ 6 ընտրատարածքում արձանագրած խախտումները:

Տեղամասային հանձնաժողովի աշխատակարգ
Քվեարկության նախապատրաստման փուլում խախտումների հաջորդ խումբը առնչվում է տեղամասային հանձնաժողովի աշխատակարգին: Ընդհանուր առմամբ, գրանցվել է 44 նման խախտում՝ 42 տեղամասում, որոնցից 18 դեպքը կապված է եղել տեխնիկական սարքի ոչ պատշաճ նախապատրաստման, 17-ը՝ հանձնաժողովի նիստը սահմանվածից ուշ սկսելու, իսկ մնացած 9 դեպքերը՝ վիճակահանության կարգի խախտումների հետ: Ընդհանուր առմամբ, գրանցված 44 խախտումներից վերացվել է միայն 11-ը և 20-ը գրանցվել է տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:

Քարոզչական նյութերի առկայություն տեղամասում
Քվեարկության սենյակում կամ տեղամասի տարածքում քարոզչական նյութերի առկայության հետ կապված գրանցվել է 18 խախտում՝ 17 տեղամասում, որոնցից միայն կեսի դեպքում է խախտումը վերացվել այն բացահայտելուց հետո, և 7 դեպքն էլ արձանագրվել է տեղամասի գրանցամատյանում:

Քվեարկության պարագաների հետ կապված խնդիրներ
Քվեարկությունը սկսելուց առաջ քվեարկության պարագաների հետ կապված 6 դեպք է արձանագրվել 6 տեղամասերում, որոնցից կեսից ավելին կապված է եղել քվեատուփերի հետ (պատշաճ կերպով փակված չի եղել կամ կնքված չի եղել), իսկ մնացած 2 դեպքերը կապված են եղել չհրկիզվող պահարանի, 4-ը՝ քվեատուփի հետ: 4 տեղամասերում դիտարկված խնդիրները վերացվել են, բոլոր 6 դեպքերը գրանցվել են գրանցամատյանում:

4.2.2. Քվեարկության ընթացք

Դիտորդական առաքելության ընթացքում վերհանված խախտումների մեծամասնությունը, ինչպես և տեղի է ունենում սովորաբար, գրանցվել է բուն քվեարկության ընթացքում: Այս փուլի խախտումների վերաբերյալ արձանագրվել է ընդհանուր առմամբ 864 խախտում (դիտարկված բոլոր խախտումների 53.4%-ը)՝ 423 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի 27.8%-ը):

Տեղամասային հանձնաժողովի աշխատակարգ
Քվեարկության ընթացքում գրանցվել է ՏԸՀ աշխատակարգի 37 խախտման դեպք՝ 34 տարբեր տեղամասերում, որոնց մեծամասնությունը՝ 29-ը, առնչվել է վիճակահանությամբ նախատեսված հերթափոխին, իսկ մնացած 8 դեպքերը՝ տեղամասի՝ օրենքով նախատեսված ժամանակից ուշ կամ շուտ բացելուն: Նշված 37 խախտումներից միայն 12-ն է տեղ գտել գրանցամատյանում:

Անձի ինքնության հաստատման կամ գրանցման խնդիրներ
Դիտարկվել է անձի ինքնության հաստատման կամ գրանցման խնդիրների 77 դեպք՝ 66 տեղամասում: Այս պարագայում ամենից հաճախ հանդիպող խախտումը կապված է եղել ընտրողի անվան դիմաց այլ անձի ստորագրության առկայության հետ. ընդհանուր առմամբ 38 դեպք՝ 31 տարբեր տեղամասերում, որից 26-ը արտացոլվել է գրանցամատյանում: Բացի այդ, 36 տարբեր տեղամասերում դիտարկվել են տեխնիկական սարքի հետ կապված տարբեր խնդիրներ, ինչպես օրինակ, սարքում ընտրողի անվան բացակայություն՝ 20 դեպք կամ անձը

հաստատող փաստաթղթի և սարքի տվյալների անհամապատասխանություն՝ 19 դեպք: Դրանցից 23-ը գրանցվել են գրանցամատյանում:

Քվեարկության գաղտնիության խախտում կամ փորձ

Քվեարկության գաղտնիության առումով հաղորդվել է 187 խախտում՝ 137 տեղամասերից: Դեպքերի զգալի մասը՝ 120-ը, կապված է եղել հենց ընտրողի կողմից քվեարկության գաղտնիության խախտման հետ, որոնցից 50-ը արտացոլվել է գրանցամատյանում: Մնացած դեպքերն առնչվել են այլ անձի կողմից ընտրողի քվեարկության վերահսկողությանը, որոնցից 28-ը գրանցվել են գրանցամատյանում:

Ընտրողին քվեարկել օգնելու կարգի խախտում

Ընտրողին քվեարկել օգնելու կարգի հետ կապված դիտարկվել է 75 խախտում՝ 63 տեղամասում: Խախտումների մոտ կեսը՝ 38-ը գրանցվել է գրանցամատյանում: Այս խմբի խախտումների ամենատարածված տեսակներն են եղել օգնելու իրավունք չունեցող անձի կողմից ընտրողին օգնելը (27 դեպք), նույն անձի կողմից մեկից ավելի ընտրողի քվեարկելուն օգնելը (25 դեպք) և օգնող անձի տվյալները գրանցամատյանում չգրանցելը (22 դեպք): Մեկ դեպքում ստորագրելու իրավունք չունեցող անձը՝ հանձնաժողովի անդամն է խախտել կարգը:

Ընտրողների ուղղորդում

Մեծ թվով խախտումներ են գրանցվել նաև ընտրողների ուղղորդման առումով: 112 տարբեր տեղամասերում դիտարկվել է 141 նման խախտում, որոնցից 80-ը կապված է եղել ընտրողներին հուշելու կամ ուղղորդելու, իսկ մնացածը տեղամասի ներսում ընտրողներին «ուղեկցելու» կամ խմբերի փոխադրման հետ: Նշված 141 դեպքերից միայն 48-ն է տեղ գտել գրանցամատյանում:

Քվեարկության պարագաների հետ կապված խնդիրներ

Դիտարկվել է 58 դեպք՝ 51 տեղամասերում, որոնցից 30-ը արտացոլվել են գրանցամատյանում: Գրանցված դեպքերի բացարձակ մեծամասնությունը՝ 55 դեպքերը, կապված են եղել քվեաթերթիկի դուրս հանելու կամ ներս բերելու հետ, 2 դեպք չօգտագործած քվեաթերթիկները հանելու հետ, իսկ 1 դեպքում տեղամասի կնիքը հայտնվել է տեղամասի աղբամանում:

Ընտրակաշառքի բաժանում և խոստումներ

Դիտորդներին հաջողվել է նաև վեր հանել ընտրակաշառքի բաժանման և խոստումների տրամադրման 6 դեպք՝ 5 տեղամասում, որոնցից 4-ն արտացոլվել է գրանցամատյանում:

Տեղամասում քարոզչություն կամ հակաքարոզչություն

Դիտարկվել է տեղամասում քարոզչություն կամ հակաքարոզչություն իրականացնելու 17 դեպք՝ 16 տեղամասում կամ դրա մոտակայքում, որից միայն մեկ դեպքն է գրանցվել:

Բազմակի քվեարկություն կամ այլ անձի փոխարեն քվեարկություն

Դիտարկվել է բազմակի քվեարկություն կամ այլ անձի փոխարեն քվեարկության հետ կապված 61 դեպք՝ 58 տեղամասում, որոնցից 50-ը արտացոլվել է գրանցամատյանում: Դիտարկված խախտումների մեծամասնությունը՝ 39-ը դեպք, կապված է եղել ընտրողի կողմից իր անձը

հաստատող այլ փաստաթղթով կրկնակի գրանցման հետ: Եղել են նաև այլ անձի փոխարեն գրանցման 12 դեպք և այլ անձի փոխարեն ընտրողների ցուցակում ստորագրման 10 դեպք:

Ընտրելու իրավունքի խախտում
13 տարբեր տեղամասերում գրանցվել է 13 դեպք կապված ընտրելու իրավունքի խախտման հետ, ինչի հետևանքով քաղաքացիները ամենատարբեր պատճառներով զրկվել են քվեարկելու հնարավորությունից: Նշված դեպքերից 10-ն արտացոլվել է գրանցամատյաններում:

Այլ
Ի լրումն ներկայացված խախտումների՝ 142 տեղամասերից 192 տարբեր տեսակի խախտումներ են հաղորդվել քվեարկության ընթացքի հետ կապված: Դրանք ներառել են տեսախցիկների աշխատանքների խափանում, գունավոր գրիչներով նշումների կատարում, էլեկտրականության անջատում, դիտորդական առաքելություն իրականացնող այլ կազմակերպության դիտորդի կողմից կուսակցություններից մեկին աջակցություն, չկնքված քվեարկության կտրոններ, թեկնածուի ներկայություն քվեարկության սենյակում, ընտրողների կտրոնների հերթական համարների անհամապատասխանություն ցուցակի համարներին, ՏԸՀ անդամների կողմից ճաշկերույթի կազմակերպում քվեասենյակում՝ ընտրողների ներկայությամբ և երբեմն մասնակցությամբ, հանձնաժողովի անդամի կողմից ոգելից խմիչքի ազդեցության տակ պարտականությունների իրականացում, և այլն:

4.2.3 Արդյունքների ամփոփում

Արդյունքների ամփոփման փուլում գործընթացների առնչությամբ արձանագրվել է ընդհանուր առմամբ 144 խախտում (դիտարկված բոլոր խախտումների մոտ 8.9%-ը)՝ 106 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի մոտ 7%-ը):

Տեղամասային հանձնաժողովի աշխատակարգի խախտում
Ամփոփման փուլում տեղամասային հանձնաժողովի աշխատակարգի խախտումների 23 դեպք է դիտարկվել 17 տարբեր տեղամասերում: Դրանցից 10-ը գրանցվել է տեղամասի գրանցամատյանում: Ամենից հաճախ հանձնաժողովի աշխատակարգը խախտվել է կողմնակի անձանց միջամտությամբ կամ արդյունքների հաշվարկն իրականացվել է ընդհատումներով:

Արդյունքների ամփոփման և հաշվարկի կարգի խախտում
Արդյունքների ամփոփման և հաշվարկի կարգի 46 խախտում է գրանցվել 35 տարբեր տեղամասերում, որոնցից միայն 15-ն են գրանցվել գրանցամատյանում: Այս խմբի խախտումները ներառել են արդյունքների հաշվարկի գործողությունների հերթականության խախտման 5 դեպք, քվեաթերթիկների հանման, ընթերցման և ցուցադրման կարգի խախտման 5 դեպք, քվեաթերթիկի անհիմն անվավեր ճանաչման 1 դեպք, ծրարի մեջ ավելորդ պարագաների 7 դեպք, սարքի միջոցով տեղեկանք չտպելու կամ ներկաներին չտրամադրելու 2 դեպք, սխալ հաշվարկի 9 դեպք, գրանցամատյանում ելակետային տվյալների և արդյունքների պատշաճ չարձանագրման 2 դեպք, ներկաներին արձանագրություն քաղվածք չտրամադրելու

կամ լուսանկարել չթույլատրելու 13 դեպք և քվեարկության պարագաների փաթեթավորման կարգի խախտման 2 դեպք:

Քվեարկության արդյունքների կեղծում
Քվեարկության արդյունքների կեղծման 2 դեպք է դիտարկվել 2 տեղամասում:

Այլ
Արդյունքների ամփոփման փուլում գրանցվել են 73 այլ տեսակի խախտումներ 63 տարբեր տեղամասերում, որոնց թվում՝ տեղամասի կնիքի անհետացում երկու ժամով (20:00-22:00), տեղամասի տարածքում էլեկտրաէներգիայի անջատում, այլ կազմակերպություններ ներկայացնող դիտորդներին մինչև արձանագրություն կազմելը քաղվածքի տրամադրում, հանձնաժողովի անդամների՝ նախքան նիստի ավարտը տեղամասի լքում, արձանագրության նախքան արձանագրության կազմման ավարտը քաղվածքի լրացում, գրանցամատյանից քաղվածքներ իրականացնելու կամ լուսանկարահանելու արգելք, անհայտ անձի կողմից բռնությամբ ընտրատարածք մտնելու փորձ, անհամապատասխանություններ ինքնասոսնձվող դրոշմանիշների և քվեարկության կտրոնների թվերի միջև, տարբերակող նշումներ պարունակող քվեաթերթիկների առկայություն և դրանց վավեր համարում, ծրարները քվեատուփից հանելու կարգի խախտում, ելակետային տվյալները գրանցամատյանում մատիտով գրանցում, վստահված անձի կողմից ակտիվորեն հանձնաժողովի աշխատանքներին միջամտում, տեսախցիկի աշխատանքի խափանում և այլն: Նշված 70 դեպերից միայն 20-ն է արձանագրվել գրանցամատյանում:

4.2.4 Ընդհանուր բնույթի խախտումներ

Քվեարկության օրը տեղ են գտել խախտումներ, որոնք եղել են ընդհանուր բնույթի և ներառել են հետևյալը.

Դիտորդի իրավունքների խախտումներ
Արձանագրվել է դիտորդների իրավունքների խախտումների 45 դեպք՝ 43 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի 2.8%-ը): Դիտորդները հանդիպել են տարբեր տեսակի խոչընդոտների և խախտումների, որոնք լիարժեք հնարավորություն չեն տվել առնվազն ժամանակավորապես պատշաճ իրականացնել դիտորդական առաքելության անդամի պարտականությունները: Մի քանի տեղամասերում խախտվել է դիտորդի նախապատրաստական նիստին մասնակցելու իրավունքը, եղել են սահմանափակումներ տեղամասում գտնվող փաստաթղթերի բովանդակությանը ծանոթանալու և սահմանափակումներ տեղամասում շարժվելու առումներով և այլն: Ընդ որում այս խախտումներից միայն 4-ը (մոտ 8.9%-ը) են գրանցվել տեղամասերի գրանցամատյաններում:

Ճնշում և բռնություն
Թեև համեմատաբար փոքրաթիվ, սակայն անթույլատրելի, կոպիտ, էական, մի շարք պատճառներով նաև դժվար վերհանվող ու, որպես կանոն, անպատիժ մնացած խախտումներից է դիտորդների նկատմամբ ճնշում և բռնություն գործադրելը: Նման 13 միջադեպ է գրանցվել 11

տարբեր տեղամասերում՝ ներառյալ դանակի օգտագործման սպառնալիք, ֆիզիկական բռնություն, հոգեբանական ճնշման և սպառնալիքների կիրառում դիտորդների նկատմամբ: Հատկանշական է, որ նշված դեպքերից միայն մեկն է արձանագրվել գրանցամատյանում:

Կողմնակի անցած ներկայություն տեղամասում
Ինչպես և նախկինում դիտարկված ընտրությունների ընթացքում, այս անգամ ևս թե՛ քվեարկության ընթացքում և թե՛ առանձին դեպքերում անգամ ձայների հաշվարկի ժամանակ կողմնակի անցած ներկայությունը տեղամասերում լայն տարածում է ունեցել: Դիտորդները արձանագրել են 82 դեպք՝ 69 տարբեր տեղամասերում (դիտարկված բոլոր տեղամասերի մոտ 4.5%-ը): Հանձնաժողովի նախագահը և ոստիկանությունը բավարար միջոցներ չեն ձեռնարկել կողմնակի անձանց ներկայության հետ կապված խախտումները շտկելու համար: Նշված դեպքերից միայն 26-ն են արձանագրվել տեղամասային գրանցամատյաններում:

Տեղամասի մոտակայքում մարդկանց և մեքենաների կուտակումներ
Նույն կերպ լայն տարածում են ունեցել տեղամասի մոտակայքում (50 մ շառավղից պակաս) մարդկանց և մեքենաների կուտակումները, ինչը ԸՕ պահանջի խախտում է: Դիտորդները արձանագրել են 105 դեպք՝ 88 տարբեր տեղամասերում (դիտարկված բոլոր տեղամասերի մոտ 5.8%-ը): Ինչպես և կողմնակի անձանց քվեարկության սենյակում գտնվելու պարագայում, հիմնականում հանձնաժողովի նախագահը և ոստիկանությունը բավարար միջոցներ ձեռք չեն առել կողմնակի անձանց ներկայության հետ կապված խախտումները շտկելու համար: Նշված դեպքերից միայն 25-ն են արձանագրվել տեղամասային գրանցամատյաններում:

Տեխնիկական սարքի հետ կապված խնդիրներ
Տեխնիկական սարքի հետ կապված արձանագրվել է 149 դեպք՝ 130 տեղամասերում (դիտարկված բոլոր տեղամասերի մոտ 8.5%-ը): Դրանցից 96-ն է արձանագրվել գրանցամատյանում: Դրանք վերաբերել են սարքերի խափանմանը և որոշ ժամանակ չաշխատելուն, բազմակի կտրոններ տպելուն և այլն:

Դիտորդների գրանցված խախտումների հիման վրա ապրիլի 3-ին և 4-ին 309 դիմում-բողոք է ներկայացվել թվով 37 տարածքային ընտրական հանձնաժողով, որոնց հետագա ընթացքը և արդյունքները ներկայացված են «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ զեկույցում:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դիտորդական առաքելության կողմից արձանագրված փաստերի հիման վրա ԹԻՀԿ-ն եզրակացնում է՝ 2017 թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների ընթացքում չի ապահովվել այնպիսի միջավայր, որը կերաշխավորեր քաղաքացիների ազատ կամաարտահայտությունը:

2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների ընթացքում, ի տարբերություն դիտարկված նախորդ համապետական այլ ընտրությունների, չեն եղել կամ ավելի պակաս չափով են կիրառվել

խախտումների այնպիսի կոպիտ տեսակներ, ինչպիսիք են ահաբեկումներն ու բռնությունները քվեարկության գործընթացի մասնակիցների նկատմամբ, քվեատուփի լցոնումը, կրկնաքվեարկությունները, հաշվարկի ընթացքում քվեարկության արդյունքների կեղծումները և այլն: Հավանաբար, նոր ԸՕ-ով սահմանված հանրային վերահսկողության նոր մեխանիզմները (ստորագրված ցուցակների հրապարակում, տեխնիկական սարքերի միջոցով ընտրողների գրանցում, քվեարկության գործընթացի տեսահեռարձակում) առավել դժվարին և ռիսկային են դարձրել նշված խախտումների կատարումը և դրանով իսկ իրենց կանխարգելիչ ու դրական ազդեցությունն են ունեցել այդպիսի խախտումների տեսակարար կշռի նվազեցման կամ, միգուցե նաև, վերացման ուղղությամբ:

Այդուհանդերձ, քվեարկության օրը ամբողջ հանրապետության տարածքում աննախադեպ մեծ թիվ են կազմել ընտրողների ուղղորդման կամ նրանց անհարկի օգնելու դեպքերը, բաց քվեարկությունները, բացահայտ կառավարվող և վերահսկվող քվեարկությունը, որոնք ակնհայտորեն ազդել են ընտրողների ազատ կամքի արտահայտման և, հետևաբար, քվեարկության արդյունքների վրա: Ցանկալի արդյունք երաշխավորելու նպատակով դեռևս նախընտրական փուլում վարչական ռեսուրսի լայնածավալ օգտագործումը և տարածքային ընտրական ցուցակներով առաջադրված մի շարք թեկնածուների անունից բաժանվող ընտրակաշառքն ու տրվող խոստումները զուգորդվել են ուղղորդման ու վերահսկման մեխանիզմներով, ինչն արդեն իսկ կանխատեսելի էր դարձրել ընտրությունների ելքը: Տարածքային ընտրական ցուցակները, լիովին հաստատելով քաղաքացիական հասարակության կառույցների և ընդդիմադիր կուսակցությունների կողմից բարձրացված մտահոգությունները, կատարեցին իրենց «առաքելությունը»՝ ապահովելով իշխող՝ Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) գերակշիռ ներկայությունը խորհրդարանում:

Հարկ է նշել, որ ընտրողի ուղղորդման և վերջինիս քվեարկության նկատմամբ վերահսկողության համար անարգել կիրառվել են այնպիսի պարզագույն հնարքներ, ինչպիսիք են տարբեր գույնի գրիչներով քվեարկելը, ինչն արգելված չէ ԸՕ-ով, ծրարների մեջ քվեաթերթիկից բացի տարբերակող որևէ առարկա դնելը, ինչի պարագայում ևս քվեաթերթիկը վավեր է ճանաչվում, քվեախցիկների ցածր լինելը, որը դյուրինացնում է հսկողությունը, և այլն: Ընտրողների էլեկտրոնային գրանցման պարագայում լրջագույն թերություն էր մատնահետքերի համադրման օրենսդրական պահանջի բացակայությունը, ինչը չփարատեց բազմակի քվեարկության վերաբերյալ կասկածները:

Քվեարկության գործընթացում ընտրախախտումների մի զգալի մասը տեղի է ունեցել տեղամասային ընտրական հանձնաժողովների գործուն մասնակցությամբ կամ առնվազն թողտվությամբ, ինչն ապացուցում է, որ ընտրական հանձնաժողովների ձևավորման ներկա կարգավորումները հնարավորություն չեն ընձեռում անկախորեն, արդյունավետ և օրենքով սահմանված կարգով իրականացնել պատշաճ ընտրական վարչարարություն: Հերթական անգամ բացահայտվեց այս հանձնաժողովների անորակ աշխատանքը՝ ընդհուպ մինչև արձանագրությունները/քաղվածքները լիարժեք լրացնելու և տարրական թվաբանական գործողությունները ճշգրիտ կատարելու անկարողությունը, ինչի հետևանքով փաստորեն

անհրաժեշտություն է առաջանում վերադաս հանձնաժողովների կողմից կատարել համապատասխան շտկումներ ՝ առանց այդպիսի իրավասության:

2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրություններին աննախադեպ է եղել ԿԸՀ-ի կողմից հավատարմագրված դիտորդական կազմակերպությունների և դրանցում ներգրավված անձանց թիվը՝ մոտ 28,000 հոգի: Այդ կազմակերպություններից շատերը երբևէ որևէ կերպ հայտնի չեն եղել մարդու իրավունքների պաշտպանությանը կամ ժողովրդավարության խթանմանը միտված իրենց նախաձեռնություններով, ինչը հիմք է տալիս կասկածելու դրանց դիտորդական գործունեության անկեղծությանը և անկողմնակալությանը: Հետաքրքրական է, որ նման կազմակերպությունների բազմաթիվ «դիտորդներ» բարեհաջող կերպով կատարել են ընտրողների ուղղորդման և քվեարկության վերահսկողության իրենց առաքելությունը՝ առանց հանդիպելու խոչընդոտների հանձնաժողովների կողմից, ինչն ակնհայտորեն հրահանգավորված է եղել ընդհանուր կենտրոնից: Արժե նաև հիշատակել, որ ԿԸՀ-ն նախապես մերժել է ԸՕ-ով սահմանված կարգով հրավեր ուղարկել մի շարք միջազգային դիտորդական կառույցների, այդ թվում՝ այնպիսի հայտնի և ընտրությունների դիտարկման ոլորտում փորձառու հասարակական կազմակերպությունների, ինչպիսիք են Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմը (EPDE - European Platform for Democratic Elections) և Ընտրությունների մոնիտորինգի կազմակերպությունների եվրոպական ցանցը (ENEMO – European Network of Elections Monitoring Organizations), ինչը վկայում է, որ իշխանությունները պարզապես հետաքրքրված չեն եղել ապահովելու անկողմնակալ հանրային վերահսկողություն ընտրությունների նկատմամբ:

Ըստ սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի և միջազգային կազմակերպությունների առաջարկությունների՝ ընտրական օրենսդրության փոփոխությունը պետք է նպատակ հետապնդեր ապահովել ընտրությունների նկատմամբ հանրային վստահությունը: Չնայած ՀՀ իշխանությունների կողմից կատարված որոշակի քայլերին ու միջազգային և օտարերկրյա դիվանագիտական որոշ կառույցների կողմից տրամադրված զգալի ֆինանսական աջակցությանը, հանրային վստահությունն ընտրությունների նկատմամբ ոչ միայն չավելացավ, այլև հերթական անգամ և առավել սուր հարցականի տակ դրվեց ընտրություններով երկրի քաղաքական կյանքում փոփոխություն կատարելու հնարավորությունը: 2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունները ցույց տվեցին ընտրական համակարգում առկա էական սահմանափակումների շարունակական լինելը, ընտրական համակարգի՝ իր գործառույթների կատարման անհնարինությունը, ինչի հետևանքով շարունակվում է խորանալ հանրային անվստահությունը ընտրությունների ինստիտուտի նկատմամբ: Ազատ և արդար ընտրությունների ապահովման, ընտրական իրավունքի իրացման, պաշտպանության և ընտրախախտումների արդյունավետ քննություն իրականացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է քաղաքական կամք, ինչն, ակնհայտորեն, առկա չէր և նկատելի չէր իշխող կուսակցության դիրքերը քաղաքական դաշտում զիջելու պատրաստակամություն:

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քվեարկության օրը ընտրողների կամքի ազատ արտահայտման համար անհրաժեշտ նախադրյալներ և պատշաճ ընտրական գործընթացներ ապահովելու համար անհրաժեշտ է արմատական լուծում տալ հետևյալ առանցքային խնդիրներին.

6.1 Ընտրական վարչարարության բարելավում

Անհրաժեշտ է վերանայել տեղամասային հանձնաժողովների ձևավորման և գործունեության համակարգը՝ վերացնելով քաղաքական և այլ կախվածությունները՝ միաժամանակ հստակեցնելով պատասխանատվությունը: Նախընտրելի է, որպեսզի ՏԸՀ-ները կազմավորվեն տարածքային ընտրական հանձնաժողովների սկզբունքով՝ օրենքով սահմանված չափորոշիչների հիման վրա և նշանակվեն ԿԸՀ-ի կողմից: Նման մեխանիզմը կնպաստի հանձնաժողովների մասնագիտական որակի բարձրացմանը, ԿԸՀ-ի կողմից տրվող մեթոդական ցուցումների միասնական կիրառության ապահովմանը:

6.2 Մրցակցային միջավայրի ապահովում

Տարածքային ընտրական ցուցակները պետք է վերացվեն և ընտրակարգն ամբողջությամբ բերվի համամասնական ընտրությունների ձևաչափի, ինչն էապես կսահմանափակի կամ նվազագույնի կհասցնի ընտրակաշառքի, ճնշումների, սպառնալիքների միջոցով գործարարների կամ ազդեցության այլ լծակներ ունեցողների միջոցով իրենց կուսակցության օգտին ձայներ բերելուն միտված գործողությունների ուղղակի մոտիվացիան և հավանականությունը:

Պետք է խստացվեն վարչական ռեսուրսի օգտագործումը սահմանափակող օրենսդրական կարգավորումները և սահմանվեն պատասխանատվության համարժեք միջոցներ՝ կանխարգելելու վարչական ռեսուրսի չարաշահման հաշվին մրցակցության խեղաթյուրումը: Կուսակցական կամ այլ մասնավոր շահին սպասարկելու նպատակով թեկնածուի կողմից հանրային ռեսուրսի օգտագործման ցանկացած դեպք պետք է դատապարտելի լինի՝ դրանից բխող իրավական հետևանքներով՝ մինչև համապատասխան քաղաքական ուժի և տվյալ թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելը:

6.3 Ընտրողների ցուցակների ճշգրտում

Պետք է հիմնովին և մեկընդմիշտ լուծել ընտրացուցակների հետ կապված խնդիրները: Մասնավորապես՝ անհրաժեշտ է վերանայել ընտրողների ռեգիստրի ձևավորման մեխանիզմը՝ տարանջատելով ՀՀ-ում և երկրից դուրս գտնվող քաղաքացիներին: Որպես սրա այլընտրանք նպատակահարմար ենք համարում 2016թ. հունիսին 30-ին «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված, սակայն հետագայում ժամանակի սղության ու տեխնիկական դժվարությունների պատրվակով չիրականացված նախագրանցման համակարգի միջոցով ցուցակների մաքրմանն ուղղված մեխանիզմի ներդնումը: Ինչպես նաև անհրաժեշտ է ապահովել տեխնիկական սարքերի միջոցով հավաքված մատնահետքերի համադրման օրենսդրական և տեխնիկական հնարավորությունը:

6.4 Դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների ընդլայնում

Պետք է չեղարկել նոր ԸՕ-ով ներմուծված՝ դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքները սահմանափակող կարգավորումները, մասնավորապես, վերացնելով ՁԼՄ ներկայացուցիչների հավատարմագրման քանակային սահմանափակումները, տեղամասից դիտորդին և ՁԼՄ ներկայացուցչին դուրս հանելու հանձնաժողովի իրավունքը, քվեարկության կարգի վերաբերյալ դիտարկումներ ներկայացնելու իրավունքի սահմանափակումը, ինչպես նաև վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող լրատվամիջոցների համար խտրական արտոնությունները:

Միաժամանակ, առավել արդյունավետ ընտրական գործընթացներ ապահովելու նպատակով դիտորդներին և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին, բացի ընտրական խախտումների վերաբերյալ իրենց գնահատականը տեղամասի գրանցամատյանում գրանցելու հնարավորությունից, պետք է իրավունք վերապահվի նաև բողոքարկելու այդ խախտումների հետ կապված ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները կամ անգործությունը, ինչպես նաև վիճարկելու տեղամասում քվեարկության արդյունքները: Դիտորդական կազմակերպությունները, որոնք ստանձնում են պատասխանատվություն իրենց դիտորդների համար, պետք է նաև իրավունք ունենան դատական կարգով պաշտպանել նրանց ոտնահարված իրավունքները:

Միջազգային հասարակական կազմակերպություններին հրավիրելու իրավասությունը պետք է տրվի ոչ միայն պետական, այլև հասարակական կառույցներին: Դա կվերացնի ԿԸՀ և հրավեր ուղարկող մյուս իրավասու կառույցների կողմից կամայականության դրսևորումները և կնպաստի հանրային վերահսկողության որակի բարելավմանը՝ ամրապնդելով գործակցությունը պրոֆեսիոնալ դիտորդական կառույցների հետ: ԿԸՀ-ն կարող է մերժել միջազգային դիտորդական կազմակերպության գրանցումը միայն այն դեպքում, եթե այն չի բավարարում օրենքով սահմանված կոնկրետ չափորոշիչների:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ-ում ընտրական գործընթացները, չնայած որոշակի դրական զարգացումներին, իրականում ավելի ու ավելի են հեռացնում մրցակցային, ազատ ու արդար ընտրություններ ապահովելու հնարավորությունը: Անհրաժեշտ է լրջորեն վերլուծել 2017թ. ապրիլի ընտրությունների դասերը և շարունակել ընտրական օրենսդրության ու պրակտիկայի բարեփոխումները:

Հուսով ենք, որ սույն զեկույցում ներկայացված խնդիրները կարժանանան թիրախային շահագրգիռ կողմերի ուշադրությանը: Մասնավորապես, ակնկալվում է, որ՝

- համապատասխան պետական մարմինները պատշաճ ուշադրություն կդարձնեն զեկույցում մատնանշված ընտրախախտումներին ու կեղծիքներին և ընտրական

օրենսդրությունն ու պրակտիկան վերանայելիս՝ կձեռնարկեն միջոցներ վերացնելու մատնանշված համակարգային խնդիրները.

- կուսակցությունները կգործադրեն ջանքեր՝ ընդլայնելու ընտրական օրենսդրության վերաբերյալ իրենց վստահված անձանց գիտելիքները և առավել պատշաճ կկազմակերպեն ընտրական գործընթացների վերահսկողությունը, ինչպես նաև ջանքեր կգործադրեն փոփոխելու օրենսդրությունը՝ ստեղծելու առավել մրցակցային միջավայր.
- քաղաքացիները կկարևորեն դիտորդական առաքելության դերն ու նշանակությունը, կմասնակցեն միջազգային ստանդարտներին համապատասխանող ազատ և արդար ընտրական համակարգի ստեղծման նկատմամբ հանրային պահանջի ձևավորմանն ու կստանձնեն որոշակի անձնական պատասխանատվություն ընտրական գործընթացները վերահսկելու ուղղությամբ.
- միջազգային կառույցները կվերանայեն իրենց մոտեցումը և ընտրական օրինագծերի տեքստերի կամ ընտրությունների վերաբերյալ իրենց գնահատականները կհիմնավորեն օբյեկտիվ փաստարկներով՝ ձեռնպահ մնալով հապշտապ եզրակացություններից ու քաղաքական կոնյունկտուրային տեքստերից: